Таким образом, поток миграции из Армении не только не прекратится после вступления республики в ЕАЭС, а в первые годы еще более усилится, поскольку либерализация визового режима в ЕАЭС приведет к росту высококвалифицированной рабочей миграции и миграции студентов. А это говорит о том, что страну покидает востребованный человеческий капитал, который направляется на развитие экономики иностранных государств, в то время как при наличии соответствующей политики армянских властей мог способствовать развитию экономики Армении.

Учитывая неизбежность роста иммиграции в Россию, представляется важным понять, какие факторы могут способствовать и противодействовать этому процессу, и что, неменее важно, ожидает в России сегодняшних и будущих мигрантов?

В целях сохранения экономических и трудовых интересов, предотвращения неконтролируемой миграции как неквалифицированной, так и высококвалифицированной рабочей силы в Армении, необходимо создание общих механизмов

регулирования и контроля возникающих потоков трудовых мигрантов по территории союза.

При сильной политической воле эти явления можно преодолеть.

ЛИТЕРАТУРА

1. *Погосян Г.А.* Анализ миграционных потоков в Армении // Транзитная миграция и транзитные страны: теория, практика и политика регулирования / Под ред. И.Молодиковой, Ф. Дювеля. М: Университетская книга, 2009. С. 197.
2. *Poghosyan G.A.* Out – migration from Armenia" Transboundary Migration in the Post-Soviet Space. Three Comparative Studies. Ed. By Nikolai Genov and Tessa Savvidis, Frankfurt am Main, etc.: Peter Lang, 2011. PP. 44–46.
3. *Погосян Г.А.* Миграционные потоки в Армении. Миграционные мосты в Евразии // Сб. мат. VI международной научно-практической конференции «Роль миграции в социально-экономическом и демографическом развитии посылающих и принимающих стран Евразии: регионы Восточной Европы и Центральной Азии». М., Ер., 2014. С. 364 (361–365).
4. *Погосян Г.А.* Общество в эпоху перемен: надежды и реалии // Вестник Российской Академии Наук. М., 2012., Т. 82, № 5. С. 446 (441–449).
5. *Погосян Г.А.* Общество в эпоху перемен: надежды и реалии». ж-л Вестник Российской Академии Наук. М. 2012., Т. 82, № 5, с. 448 (441–449).
6. *Осипов В.Г.* Интеллектуальная миграция: глобальный опыт и реалии Армении // Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում. Եր., 2012. С. 138 (127–142).
7. *Осипов В.Г.* Российский вектор армянской трудовой миграции: реалии и перспективы // Փիլիսոփայությունը արդի աշխարհում. Եր., Եվրոպրինտ 2013. С. 185 (178–192).
8. См.: *Рывкина А.Н., Гущина Е.Г.* Международная трудовая миграция как фактор влияния на функционирование рынка квалифицированного труда в условиях глобализации //Известия Волг ГТУ, 2011. СС. 113–119.
9. См.: http://www.yerkramas.org/2013/03/23/okolo-1500-studentov-iz-armenii-uchatsva-v-zarubezhnyx-vuzax
10. *Осипов В.Г.* Академическая мобильность в Евразийском регионе: реалии и перспективы". Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Եր., LIMUSH 2014. С. 115 (112–135).
11. См. *Meyer J/B, And Brown*. Scienific Diasporas: A New Approach to the Brain Drain // Discussion Paper № 41. World Conference on Science "Science for the twenty-First Centure". UNESCO-JCSU, Budapest (Hungary), 26 June – 1 July 1999. P. 1.
12. Национальный доклад «Молодежь Армении»: часть I. Ер.: Министерство спорта и по делам молодежи Республики Армения, 2011. С. 77 (на арм. языке).
13. *Погосян Г.А.* Общество в эпоху перемен: надежды и реалии» // Вестник Российской Академии Наук. М., 2012 Т. 82, № 5.С. 446 (441–449).
14. *Осипов В.Г.* Евразийский регион: вызовы образовательной миграции // Миграционные мосты в Евразии. Сб. Материалов VI международной научно-практической конференции «Роль миграции в социально-экономическом и демографическом развитии посылающих и принимающих стран Евразии: регионы Восточной Европы и Центральной Азии». М., Ер., 2014, С. 426 (423–427).

INTELLECTUAL MIGRATION FROM ARMENIA IN TERMS OF ENTRY INTO THE EURASIAN UNION

I. Arakelyan

SUMMARY

Intellectual migration as a factor of global economic and social development is a regular movement of "human capital" in the world market promoting the exchange of knowledge and experience.
In the context of globalization and inconsistency among the potentially adverse impacts of international migration is of particular concern in Armenia, especially the emigration of highly qualified intellectual personnel. Armenia is included in the process of international migration, mostly only as a donor country and highly qualified personnel.
In Armenia, despite the difficult political and economic background, are realized integration projects directed to the developing and deepening of cooperation among the States of the Eurasian region.
Threats to economic and national security caused particularly by the intellectual emigration from Armenia, is quite difficult to estimate quantitatively. However, you can attempt to identify causal relationships, highlighting the most serious of them. At present, within the frames of the EAEC there is necessity of turnaround of strategy concerning the holding and primitive attempts of understanding the physical return of scientists within the concept of mutually beneficial cooperation.
Keywords: intellectual migration, globalization, "brain drain", economic and national security.

ՄՏԱՎՈՐ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ի. Ա. Առաքելյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Մտավոր միգրացիան որպես համաշխարհային տնտեսական և սոցիալական զարգացման գործոն, իրենից ներկայացնում է «մարդկային կապիտալի»-ի բնական շարժում համաշխարհային շուկայում, որը նպաստում է գիտելիքների եւ փորձի փոխանակմանը:
Գլոբալիզացիայի և անկայունության պայմաններում պոտենցիալ բացասական գործոնների շարքում Հայաստանում առավել քան մտահոգիչ է միջազգային միգրացիան, երբ արտագաղթում են բարձր որակավորում ունեցող կադրեր, հատկապես, մտավոր աշխատողները: Հայաստանը ընդգրկված է միջազգային միգրացիայի գործընթացում, հիմնականում միայն որպես դոնոր երկիր բարձր որակավորում ունեցող կադրերի առումով:
Հայաստանում, չնայած բարդ քաղաքական եւ տնտեսական իրավիճակին, իրականացվում են ինտեգրման ծրագրեր, որոնք ուղ-

ղված են Եվրասիական տարածաշրջանի պետությունների միջև համագործակցության զարգացմանը և խորացմանը:

Տնտեսական եւ ազգային անվտանգության սպառնալիքները, որոնք հետեւանք են հատկապես ինտելեկտուալ արտագաղթի, բավականին դժվար է գնահատել քանակապես: Ինչևէ, կարող եք փորձել բացահայտել պատճառահետեւանքային հարաբերությունները, կարեւորելով դրանցից ամենալուրջը: Ներկայումս, ԵՎՄ-ի շրջանակներում է կա անհրաժեշտություն ռազմավարության փոփոխության վերաբերյալ՝ կապված փոխշահավետ համագործակցության շրջանակներում գիտնականների ֆիզիկական վերադարձի պարզ փորձերի իրականացմանը:

Հիմնաբառեր՝ ինտելեկտուալ միգրացիա, գլոբալացում, «ուղեղների արտահոսք», տնտեսական և ազգային անվտանգություն:

ЮРИСПУДЕНЦИЯ

ԿԱՄԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Ռ. Ավետիսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հեղինակը քննարկում է կամավոր բժշկական ապահովագրության իրավահարաբերությունների սուբյեկտների հետ կապված պատասխանատվության կատեգորիան, առաջարկում է միջոցներ՝ ուղղված այդ ապահովագրված անձանց շահերի պաշտպանության ուժեղացմանը:

Ս.Ավետիսյանը տիրապետում է քննարկվող հարցի մանրամասներին, հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում Հայաստանի և Ռուսաստանի գործող օրենքներում: Նրա հղումները խոսում են հեղինակի լայն հետաքրքրությունների մասին:

Հոդվածը շարադրված է կուռ, գրագետ, տիպիկ օրինակներով և նրանում արված մի շարք հետաքրքիր առաջարկներ կարելի է նկատի առնել այդ ոլորտում նոր բարեփոխումների դեպքում:

Հիմնաբառեր. Կամավոր բժշկական ապահովահագրություն, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, բժշկական ապահովագրության սուբյեկտներ, ապահովադիր, ապահովագրող, պայմանագրային պատասխանատվություն:

Կամավոր բժշկական ապահովագրության սուբյեկտների պատասխանատվությունը

ԿԲԱ պայմանագրից բխող քաղաքացիաիրավական պատասխանատվության հարցը բժշկական ծառայությունների մատուցման և ԿԲԱ իրավահարաբերություններում դեռևս թերի է ուսումնասիրված, իսկ իրավաբանական գրականության մեջ դրա սահմանումը վիճելի է:

Որոշ հեղինակներ «քաղաքացիաիրավան պատասխանատվության» հասկացությունը բնութագրում են որպես պետական հարկադրանքի եղանակ: Այսպես, օրինակ, Վ.Պ. Գրիբանովը այն բնութագրում է որպես պետական հարկադրանքի միջոց՝ կապված գույքային բնույթի սանկցիաների կիրառման հետ, որոնք ուղղված են խախտված իրավունքների վերականգնմանը և քաղաքացիական շրջանառության իրավահավասար մասնակիցների տնտեսական նոր-

մալ հարաբերությունների խթանմանը[1]: Ս.Ն. Բրատուսը գտնում է, որ իրավաբանական պատասխանատվությունը պարտավորության կատարումն է պետական կամ դրան հավասարեցված հասարակական հարկադրանքի հիման վրա: Ընդ որում, նա համարում է, որ «պարտավորության ինքնակամ կատարումը իրավաբանական պատասխանատվություն չէ»[2]:

Օ.Ս. Իոֆֆեն գտնում է, որ ցանկացած իրավական պատասխանատվության ընդհանուր հատկանիշը «այն է, որ պատասխանատվության յուրաքանչյուր միջոց հանդես է գալիս որպես պետական հարկադրանքով ապահովված սանկցիա»: Պատասխանատվությունը՝ «որպես կատարված քաղաքացիական իրավախախտման բացասական հետևանք, արտահայտվում է կամ չկատարված պարտականությունը նոր պարտականությամբ փոխարինելու, կամ խախտված պարտականությունը նոր, լրացուցիչ պարտականության միացնելու կամ այն իրավունքից զրկելու մեջ, որից բխել է խախտված պարտականությունը…»[3]:

Ինչպես իրավամբ նշում է պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանը, դժվար թե կարելի է համաձայնել այն տեսակետի հետ, որը ոչ միայն նույնացնում է թեկուզև միմյանց հետ սերտորեն կապված, մեկը մյուսին պայմանավորող, բայց այնուհանդերձ միմյանցից տարբերվող «սանկցիա» և «պատասխանատվություն» հասկացությունները, այլև անբարենպաստ հետևանքների առաջացումը համարում է ներհատուկ միայն պատասխանատվության միջոցներ համարվող սանկցիաներին: Ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակը, սանկցիան իրավանորմով կամ պայմանագրով նախատեսված ներգործության միջոց է, իրավախախտման համար նախատեսված անշահավետ հետևանք, որի կիրառման համար ամենաքիչը անհրաժեշտ է, որ խախտված լինեն սուբյեկտիվ իրավունքներ, և տուժողը դրսևորի սանկցիա կիրառելու ցանկություն: Սանկցիայում նախատեսված ներգործության միջոցները սոսկ վերացական հնարավորություն են, որոնց կիրառելիությունը, օգտակարությունը և ներգործությունը կախված են և տուժողի ցանկությունից, և պատասխանատվության գործընթացն ապահովող հիմքերի ու պայմանների առկայությունից: Հետևաբար, սանկցիան՝ որպես պոտենցիալ հնարավորություն, միշտ գոյություն ունի, իսկ իրավական պատասխանատվությունը վրա է հասնում միայն սուբյեկտիվ իրավունքների իրական խախտման դեպքում՝ որպես իրավական սանկցիայով նախատեսված որոշակի հետևանքների իրականացման գործընթաց, սանկցիայի կիրառման գործառույթ[4]:

Նշված մոտեցումները ներառում են նաև այլ թերություններ. մասնավորապես՝ պարտավորության հարկադիր կատարման և օպերատիվ ներգոր-

---

[1] Տե՛ս *Грибанов В.П.* Осуществление и защита гражданских прав. М., 2000, էջ 299:

[2] Տե՛ս *Братусь С.Н.* Юридическая ответственность и законность. М., 1976, էջ 85–86:

[3] Տե՛ս *Иоффе О.С., Шаргародский М.Д.* Вопросы теории права. М., 1961, էջ 317:

[4] Տե՛ս Բարսեղյան *Տ.Կ.* Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Եր., 2006, էջ 47–48:

ծության միջոցները սանկցիա չեն համարում՝ գտնելով, որ դրանք պարտապանի համար անբարենպաստ հետևանքներ չեն առաջացնում[5]:

«Քաղաքացիաիրավական պատասխանատվության» հասկացության սահմանման վերաբերյալ ընդունված է մեկ մոտեցում ևս: Այն արտացոլում է միայն դրա պրակտիկ կողմերը՝ կապված համապատասխան իրավական նորմերի կիրառման հետ, որոնք պատասխանատվություն են նախատեսում պայմանագրային պարտավորության խախտման համար: Տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտվում է որպես պարտավորության խախտում թույլ տված պարտապանի պարտականություն՝ պարտատիրոջը հատուցել պատճառված վնասները և վճարել օրենքով կամ պայմանագրով սահմանված տուգանքը[6]:

Մեր կարծիքով, «քաղաքացիաիրավական պատասխանատվության» հասկացության առավել լիարժեք սահմանումը տվել է պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանը: Նա գտնում է, որ **«քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սուբյեկտիվ իրավունքներին վնաս պատճառող իրավախախտումներից տուժողի շահերի պաշտպանությունն ապահովելու համար օրենքով կամ կողմերի պայմանավորվածությամբ սահմանված այն հատուկ սանկցիաների կիրառման գործառույթն է, որի արդյունքում իրավախախտողը զրկվում է որոշակի նյութական բարիքներից»**[7]:

Կարծում ենք, որ հենց այդ հասկացությունը առավել կոնկրետ է արտահայտում քաղաքացիաիրավական պատասխանատվության տարբերությունը իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներից:

Ապահովագրության պայմանագրով քաղաքացիաիրավական պատասխանատվությունը համանուն պատասխանատվության տարատեսակ է: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ ԿԲԱ իրավահարաբերություններում քաղաքացիաիրավական պատասխանատվությունը օրենքով կամ կողմերի պայմանավորվածությամբ սահմանված այն հատուկ սանկցիաների կիրառման գործառույթն է, որի արդյունքում իրավախախտողը զրկվում է որոշակի նյութական բարիքներից:

Ապահովագրական հարաբերություններում քաղաքացիաիրավական պատասխանատվությունը **ըստ սուբյեկտների կարելի է բաժանել երեք խմբի՝ ապահովադրի պատասխանատվություն, ապահովագրողի պատասխանատվություն, բժշկական ծառայություն մատուցողի պատասխանատվություն:**

Ապահովադրի պատասխանատվությունը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ապահովադրի պատասխանատվությունը հանդես է գալիս ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի կորստի ձևով: Այդ մասին գրա-

---

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

[6] Տե՛ս Гражданское право России: Курс лекций. Ч.1 / Под ред. О.Н. Садикова М.: Юрид. лит., 1996, էջ 269:

[7] Տե՛ս *Բարսեղյան Տ.Կ.* Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Եր., 2006, էջ 58:

վոր որոշումն ընդունվում է ապահովագրական ընկերության կողմից, իսկ մերժման դեպքում՝ պատճառաբանված հիմնավորմամբ: Ապահովադրին ապահովագրական հատուցումը մերժելու հիմքեր են ապահովադրի (ապահովագրված անձի) կամ շահառուի՝ դիտավորությամբ կատարված գործողությունները, որոնք ուղղված են ապահովագրական պատահարի առաջացմանը: Այդպիսի հետևանքների է հանգեցնում նաև ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ դրանք թաքցնելը (ՀՀ քաղ.օր-ի 1003[1]-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Հատուցման մերժման հիմք է նաև ապահովադրի՝ երրորդ անձի կողմից հատուցում ստանալը, որը պատասխանատու է պատճառված վնասի համար այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից:

Ապահովադրի պատասխանատվությունը վրա է հասնում նաև հետևյալ դեպքերում.

1. Ապահովադիրը (ապահովագրված անձը, շահառուն) չի հանձնել ապահովագրողին իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, ինչի հետևանքով անհնարին է դառնում այդ իրավունքի իրականացումը, կամ ապահովադիրը (ապահովագրված անձը, շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից (ՀՀ քաղ.օր-ի 1021-րդ հոդված):

2. Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրը ապահովագրական պատահարի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո անհապաղ (ողջամիտ ժամկետում) չի տեղեկացրել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, եթե ծանուցման ժամկետ և/կամ եղանակ նախատեսված չէ պայմանագրում (ՀՀ քաղ.օր-ի 1017-րդ հոդված):

Այսպիսով, առաջին խումբն են կազմում այն դեպքերը, որտեղ պարտականությունների կատարումը խախտվում է ապահովադրի կողմից, և առաջացնում հետևյալ իրավական հետևանքները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1000-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ ապահովադիրը սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների մասին ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ, ապա ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել պայմանագիրը և կիրառել սույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները»: Այսպիսով, ապահովագրողն իրեն պատճառված իրական վնասի հատուցման իրավունք ունի:

Ապահովադրի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1015-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ «Ապահովադրի կամ շահառուի կողմից ոչ կյանքի ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում

սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ապահովադիրը պարտավոր է ապահովագրողին անհապաղ հայտնել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա»: Այս պարտականությունները չկատարելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը և պահանջելու լուծել ապահովագրության պայմանագիրը և հատուցելու պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները կամ նվազեցնելու հատուցման չափը կամ չնվազեցնելու ապահովագրավճարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1010-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն»: Նույն հետևանքն է նախատեսում նաև վերոնշյալ հոդվածի 7-րդ մասը, եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը:

Ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքներին վերաբերող գրականության մեջ առկա է երկու վիճելի հարց՝ արդյոք կարո՞ղ է ապահովագրության պայմանագիրը ապահովագրավճարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով կասեցվել, թե՞ այն կարող է միայն վաղաժամկետ դադարել:

Պայմանագրի կասեցումը ապահովագրողի կողմից սանկցիայի կիրառում է ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման ժամկետի խախտման համար: Ապահովագրողը իրավունք ունի միակողմանի կասեցնել ԿԲԱ պայմանագրի գործողությունը՝ այդ մասին ծանուցելով ապահովադրին: Այլ կերպ ասած՝ կասեցում նշանակում է ապահովագրության ժամկետի ընդմիջում և ենթադրում է մի ժամանակահատված, երբ համապատասխան իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահարներ[8]:

Այսպես, օրինակ՝ «Ինգո-Արմենիա» ապահովագրական ընկերության կողմից առաջարկված ԿԲԱ պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովագրողն իրավունք ունի «ապահովագրավճարի մի մասի կամ ամբողջ ապահովագրավճարի՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից չվճարվելու դեպքում կասեցնել ապահովագրական պայմանագրով իր պարտավորությունների կատարումը կամ դադարեցնել ապահովագրության պայմանագիրը»[9]:

---

[8] Տե՛ս *Дедиков С.В.* Договор добровольного медицинского страхования // Цивилист. 2006. № 4:

[9] Տե՛ս Բժշկական ապահովագրության կանոններ (էլ. աղբյուր[a] http://www.ingoarmenia.am/uploads/files/Medical%20insurance%20rules_%20eng.pdf):

Յու. Ֆոգելսոնի կարծիքով, կասեցման օրինականությունը կասկածելի է հետևյալ պատճառով. պայմանագրով պայմանավորված ապահովագրության գործողության կասեցման մասին պայմանը` որպես ժամանակին չվճարված հերթական ապահովագրավճարի հետևանք, ստեղծում է կողմերի շահերի անհավասարակշռություն (դիսբալանս): Բայց այս խնդիրն առկա է ոչ միայն պայմանագրի գործողության կասեցման, այլ նաև ապահովագրության պայմանագրի գործության լրիվ դադարեցման դեպքում` որպես հերթական ապահովագրավճարը չվճարելու հետևանք[10]:

Հերթական ապահովագրավճարը սահմանված ժամկետում չվճարելու վերաբերյալ պայմանագրի գործողությունը դադարեցնելու հնարավորության հարցի շուրջ ՌԴ-ում ձևավորվել էր երկու մոտեցում: Մեկը բխում էր ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի 3-րդ մասից ու պայմանագրի ազատությունից և կայանում է նրանում, որ այդ հիմքով պայմանագրի դադարեցումը հնարավոր է: Ընդ որում, ՌԴ դատական պրակտիկայում մինչև 2004թ. ձևավորվել էր հենց այդպիսի դիրքորոշում[11]: Բայց 2003թ. վերջերին ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանների նախագահների խորհրդում արտահայտվել էր այլ դիրքորոշում` հիմնված թույլ կողմի պաշտպանության սկզբունքի վրա, որում նշվում էր, որ անթույլատրելի է որպես սահմանված ժամկետում ապահովագրավճար չվճարելու հետևանք պայմանագրի գործողությունը մեքենայորեն դադարեցնելը առանց ապահովադրին նախնական ծանուցման և առանց նրան հնարավորություն ընձեռելու գիտակցելու և ուղղելու ստեղծված իրավիճակը[12]:

Գտնում ենք, որ այս դիրքորոշումը թույլ է տալիս վերացնել կողմերի շահերի անհավասարակշռությունը, սակայն, ճիշտ կլինի, որ այն ամրագրվի օրենսդրորեն:

Մենք ևս համակարծիք ենք, որ մինչև ապահովագրավճար չվճարելու պատճառով ապահովագրական պայմանագրի դադարեցումը ապահովագրողը նախապես պետք է գրավոր ծանուցի ապահովադրին ապահովագրավճար վճարելու անհրաժեշտության մասին՝ տրամադրելով նրան ողջամիտ ժամկետ:

Իսկ ինչ վերաբերում է ապահովագրության պայմանագրի կասեցմանը, ապա դրա կիրառումը հակասում է օրենսդրությանը, քանի որ նման սանկցիան խախտում է ԿԲԱ կոլեկտիվ պայմանագրում ապահովագրված անձի և անհատական պայմանագրում ապահովադրի իրավունքները: Պայմանագրի կասեցումը կատարվում է ապահովագրողի նախաձեռնությամբ՝ առանց

---

10 Տե՛ս *Фогельсон Ю.Б.* Страховое право: теоретические основы и практика применения («Норма», «Инфра-М», 2012)/ КонсультантПлюс:

11 Տե՛ս Постановление ФАС Московского округа от 13 января 2003г. N КГ-А40/8597-02; Постановление ФАС Волго-Вятского округа от 8 февраля 2000г., № А43-4829/99-23-206; Постановление ФАС Уральского округа от 17 мая 2000г. N Ф09-617/2000-ГК:

12 Տե՛ս Президиум высшего арбитражного суда РФ. Информационное письмо от 28 ноября 2003г. № 75, Обзор практики по страховым спорам (п. 16)./ КонсультантПлюс:

ապահովադրի հետ համաձայնեցնելու, և հետևաբար կարող են էապես վտանգվել բժշկական օգնության դիմող անձանց շահերը[13]:

Ապահովագրողի պատասխանատվությունը: Ապահովագրողի քաղաքացիա-իրավական պատասխանատվության ինստիտուտը ապահովագրական օրենսդրության մեջ ամենախճճվածներից մեկն է, քանզի պատասխանատվության այս տեսակը հանգում է ապահովագրողի՝ ապահովագրական դեպքի վրա հասնելիս ապահովագրական գումարը վճարելու պարտականությանը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1024-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե անձը, որի վրա օրենքով դրված է ապահովագրության պարտականությունը, չի իրականացրել այն կամ ապահովագրության պայմանագիրը կնքել է օրենքով սահմանված պայմանների համեմատությամբ շահառուի դրությունը վատթարացնող պայմաններով, ապա ապահովագրական պատահարը վրա հասնելու դեպքում նա պարտավորվում է շահառուին վճարել այն չափի գումար, որը նա կստանար, եթե ապահովագրությունն իրականացվեր պատշաճ կարգով»:

Այս հոդվածից բխում է, որ ապահովագրողի պատասխանատվությունը սահմանափակվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտականությամբ:

Գործող օրենսդրությունը ապահովագրողի համար սահմանում է նաև պատասխանատվություն ապահովագրության պայմանները չկատարելու համար: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1014-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ապահովադրի (շահառուի) կողմից ապահովագրության պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում նրան վերադարձվում են պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարները՝ սահմանելով կատարված ծախսերը, եթե դրանք նախատեսված են ապահովագրության պայմանագրով: Եթե ապահովադրի պահանջները պայմանավորված են ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Պետք է նշել, որ գործող օրենսդրությունը նեղ է մեկնաբանում ապահովագրողի պատասխանատվությունն այն առումով, որ վերը նշված դեպքում անտեսվում է այն հանգամանքը, որ անձը, ում վրա դրված է ապահովագրության պարտականությունը, շնորհիվ այն բանի, որ չի կատարել իր պարտականությունը կամ այն կատարել է ոչ պատշաճ կարգով, անհիմն խնայում է այդ գումարները:

Այսպիսով, մեզ թվում է ոչ միայն տրամաբանական, այլև նպատակահարմար է լրացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1014-րդ հոդվածի 5-րդ մասը հատուկ նորմով, որը կներառի ապահովագրողի կողմից կամավոր

---

[13] Տե՛ս *Овчинникова Ю.С.* Договор добровольного медицинского страхования: основные черты и проблемы применения «Право и экономика», 2011, № 8 // КонсультантПлюс:

ապահովագրության պայմանագրի խախտման հետևանքները: Մասնավորապես, պետք է ապահովագրավճարը վերադարձնելու ժամկետը խախտելու դեպքում հնարավորություն նախատեսել ուրիշի դրամական միջոցների օգտագործման համար ապահովագրողից բռնագանձել տոկոսներ օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով:

Անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1014-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. «Ապահովագրողի կողմից պայմանագրի խախտման համար ապահովադրի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում ապահովադիրն իրավունք ունի, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ստանալու պայմանագրի գործողության ընթացքում իր կողմից վճարված ապահովագրավճարների և ստացած ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը: Եթե մինչև սույն կետի համաձայն` պայմանագիրը լուծելու օրն ապահովագրական հատուցում չի կատարվել, ապա ապահովադիրն իրավունք ունի ապահովագրավճարները հետ ստանալու ամբողջությամբ: Եթե պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է, ապա ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու ապահովագրավճարներն ամբողջությամբ: **Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի վերադարձման ժամկետի խախտման դեպքում ապահովադիրն իրավունք ունի պահանջել վճարելու տոկոսներ` սույն օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան**»:

Նույնը վերաբերում է նաև ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը ուշացնելու դեպքերին:

Բժշկական ապահովագրության իրավահարաբերությունների բնույթը (բժշկական բաղադրիչի առկայությունը, ՌԴ-ում ԿԲԱ պայմանագրի հրապարակային բնույթից ելնելով`իրավահարաբերությունների կարգավորման համար սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության նորմերի կիրառումը) թույլ է տալիս պնդել, որ ընդհանրապես բժշկական ապահովագրության և մասնավորապես կամավոր բժշկական ապահովագրության ոլորտում, քաղաքացիաիրավական պատասխանատվության ավանդական ձևերին զուգահեռ[14], խախտողի նկատմամբ կարող են կիրառվել նաև ներգործության այլ ձևեր:

Իրավունքի դոկտրինայում ձևավորվել է նման հետևանքների դասակարգման նկատմամբ որոշակի մոտեցում, որի համաձայն՝ դրանցից մի քանիսը կարող են դասվել այն միջոցների թվին, որոնք խախտողին պարտավորությունների պատշաճ կատարման են հարկադրում՝ ապրանքի կամ կա-

[14] Օրինակ, Պ.Զ. Իվանիշինը ԿԲԱ իրավահարաբերություններում առանձնացնում է պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար քաղաքացիաիրավական պատասխանատվության հետևյալ ձևերը. ա)ապահովագրության պայմանագրով պարտավորության ոչ պատշաճ իրականացման համար վնասների հատուցում, բ)պարտավորության ոչ պատշաճ իրականացման համար տուժանքի վճարում, գ)ուրիշի դրամական միջոցներն ապօրինի օգտագործելու համար տոկոսների վճարում, տե՛ս Иванишин П.З. Гражданско-правовое регулирование договора добровольного медицинского страхования. Дисс. … канд. юр. наук. Казань, 2004, էջ 108:

տարված աշխատանքների թերությունների վերացում, կոնտրագենտի կողմից դրանք վերացնելու համար կատարված ծախսերի հատուցում, անորակ ապրանքների փոխարինում: Մյուսներն օպերատիվ ներգործության միջոցներ են և արտացոլում են տուժող կողմի միակողմանի գործողությունների իրավունքը՝ ապրանքներից (ծառայություններից) հրաժարվելը, պայմանագրի կատարումից հրաժարվելը և այլն:

ԿԲԱ իրավահարաբերություններում ևս այդ միջոցները կարելի է բաժանել երկու խմբի՝ պարտապանի կողմից պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում օպերատիվ ներգործության միջոցներ և ապահովադրին/ապահովագրված անձին իրավունք տրամադրող միջոցներ, որոնք ուղղված են խախտողին իր հաշվին ԿԲԱ պայմանագրով նախատեսված պարտավորությունների բնեղենով կատարմանը հարկադրելուն:

Այս վերջինի կապակցությամբ կարելի է նշել հետևյալը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 413-րդ հոդվածի համաձայն՝ Պարտապանի կողմից գույք պատրաստելու և պարտատիրոջ սեփականությանը կամ օգտագործմանը հանձնելու կամ նրա համար որոշակի աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու պարտավորությունը չկատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի ողջամիտ ժամկետում և ողջամիտ գնով պարտավորության կատարումը հանձնարարել երրորդ անձանց կամ այն կատարել իր ուժերով ու պարտապանից պահանջել հատուցելու իր կրած անհրաժեշտ ծախսերը կամ այլ վնասները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ պատասխանատվության էությունից:

Սակայն բժշկական ծառայության առանձնահատկությունը ենթադրում է հայտնաբերված թերությունների վերացում միայն կրկնակի բժշկական միջամտության դեպքում, որը, սակայն, ոչ մի կերպ չի կարող հիվանդին (ԿԲԱ իրավահարաբերություններում՝ ապահովադրին) բավարարել: Վերջինիս ձեռնտու է պարտավորության ոչ պատշաճ կատարողի նկատմամբ ներգործության այլ միջոցներ կիրառելը՝ նրան կատարված ծախսերի հատուցման պահանջ ներկայացնելով: Մեզ թվում է, որ ԿԲԱ իրավահարաբերություններում նշված միջոցի իրացումը թույլ է տալիս պնդել, որ անորակ բժշկական ծառայությունների մատուցման դեպքում կամավոր ապահովագրության պայմանագրով ապահովադիրը կարող է ապահովագրողից պահանջել հատուցել այն ծախսերը, որոնք նա կատարել է ԿԲԱ պայմանագրին կից կատարողների ցանկում չնախատեսված բժշկական ծառայություններ մատուցող այլ անձի մոտ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է նշել, որ ապահովագրողին պարտավորության պատշաճ կատարման հարկադրելու և ապահովադիրների/ապահովագրված անձանց իրավունքների պաշտպանության տեսակետից ապահովադրի նկատմամբ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում այլ հետևանքների կիրառումը կարող է լինել ավելի արդյունավետ և նպատակահարմար, քան վնասների փոխհատուցումը, տուժանքի վճարումը կամ տոկոսների գանձումը:

Բժշկական ծառայություններ իրականացնողի պատասխանատվությունը:

ԿԲԱ իրավահարաբերություններում բժշկական ծառայություններ մատուցողի պատասխանատվության հարցն ուսումնասիրելիս անհրաժեշտ է կատարել բժշկական ծառայություններ մատուցողների տարբերակում՝ հաշվի առնելով նրանց կազմակերպաիրավական և անձնային առանձնահատկությունները, քանի որ ԿԲԱ իրավահարաբերություններում բժշկական ծառայություններ մատուցող կարող են լինել ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձինք, մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք, ինչպես նաև բժշկական հաստատություններում և կազմակերպություններում որպես աշխատանքային պարտականություն բժշկական ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ հետաքրքրություն է ներկայացնում նախ և առաջ ցանկացած կազմակերպաիրավական ձևի բժշկական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց պատասխանատվությունը: Դրա պատճառն այն է, որ չնայած բժշկական հաստատություններում և կազմակերպություններում որպես աշխատանքային պարտականություն բժշկական ծառայություններ մատուցող բուժաշխատողը քրեական, վարչական և աշխատանքային պատասխանատվության սուբյեկտ է, այնուամենայնիվ քաղաքացիաիրավական պատասխանատվության սուբյեկտ չի համարվում: Այդ է վկայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը, որի համաձայն՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս աշխատողի պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում գործատուն:

Ինչ վերաբերում է ապահովագրված անձանց բժշկական ծառայություններ մատուցող մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող բժշկի պարտականությանը՝ հատուցել անորակ բժշկական ծառայություն մատուցելու հետևանքով պատճառված վնասը, ապա այս պարտականությունն ամբողջովին համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի դրույթներին:

ԿԲԱ պայմանագրով նախատեսված կարգով ապահովադրին ոչ որակյալ ծառայություն մատուցելու համար պատասխանատու կողմին որոշելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել նշված ծառայության մատուցմանը մասնակցող անձանց և որոշել նրանց պատասխանատվության սահմանները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածը սահմանում է, որ 1. Քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված

վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերություններ ի մեջ գտնվելու պարագայից:

Անկախ այն բանից, թե որ պայմանագիրն է համարվում բժշկական ծառայության մատուցման հիմք՝պարտադիր բժշկական ապահովագրությա՞ն, թե՞ վճարովի բժշկական ծառայություններ մատուցելու (կամավոր բժշկական ապահովագրություն) պայմանագիրը, սահմանվում է նաև այդ ծառայությունը մատուցողին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու կարգը:

Պրակտիկայում առողջապահության նույն ոլորտի նմանատիպ իրավահարաբերությունները կարող են ունենալ իրավական կարգավորման տարբեր ռեժիմներ: Եթե բժշկական ծառայությունը տրամադրվում է ՊԲԱ պայմանագրի շրջանակներում, ապա բուժհաստատությունը դելիկտային պատասխանատվության է ենթակվում անորակ բժշկական օգնության հետևանքով ապահովագրված անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար: Իսկ եթե հաճախորդի կյանքին և առողջության վնասը պատճառվում է անորակ վճարովի բժշկական ծառայության տրամադրման հետևանքով, ապա վրա է հասնում թե դելիկտային, թե պայմանագրային պատասխանատվություն: Այս դեպքում կհատուցվի ոչ միայն հաճախորդի կյանքին և առողջությանը պատճառված վնասը, այլև ԿԲԱ պայմանագրով նախատեսված վնասները, և կվճարվեն տուժանքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 1998 թ. մայիսի 5:
2. *Բարսեղյան Տ.Կ.* Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Եր., 2006:
3. Բժշկական ապահովագրության կանոններ (էլ. աղբյուր[a] http://www.ingoarmenia.am/uploads/files/Medical%20insurance%20rules_%20eng.pdf):
4. *Братусь С.Н.* Юридическая ответственность и законность. М., 1976.
5. Гражданское право России: Курс лекций. Ч.1 /Под ред. Садикова О. Н.. М.: Юрид. лит., 1996.
6. *Грибанов В.П.* Осуществление и защита гражданских прав. М., 2000.
7. *Иоффе О.С., Шаргародский М.Д.* Вопросы теории права. М., 1961.
8. *Дедиков С.В.* Договор добровольного медицинского страхования // Цивилист. 2006. № 4:
9. *Иванишин П.З.* Гражданско-правовое регулирование договора добровольного медицинского страхования. Дисс. … канд. юр. наук. Казань, 2004.
10. *Овчинникова Ю.С.* Договор добровольного медицинского страхования: основные черты и проблемы применения «Право и экономика», 2011, № 8// КонсультантПлюс.
11. *Фогельсон Ю.Б.* Страховое право: теоретические основы и практика применения («Норма», «Инфра-М», 2012)/ КонсультантПлюс.
12. Постановление ФАС Московского округа от 13 января 2003г.: № КГ-А40/8597-02.
13. Постановление ФАС Волго-Вятского округа от 8 февраля 2000г.: № А43-4829/99-23-206.

14. Постановление ФАС Уральского округа от 17 мая 2000г.: № Ф09-617/2000-ГК.
15. Президиум высшего арбитражного суда РФ. Информационное письмо от 28 ноября 2003г.: № 75, Обзор практики по страховым спорам (п. 16)./ КонсультантПлюс.

ОТВЕТСТВЕННОСТЬ СУБЪЕКТОВ ПО ДОБРОВОЛЬНОМУ МЕДИЦИНСКОМУ СТРАХОВАНИЮ

С.Р.Аветисян

АННОТАЦИЯ

В статье автор исследует категорию ответственности применительно к субъектам правоотношений, возникающих по добровольному медицинскому страхованию, предлагает способы, направленные на усиление защиты интересов застрахованных граждан в этих правоотношениях.

Автор рассматривает подробности обсуждаемого вопроса: проводит интересные параллели в действующих законах Армении и России. Ссылки говорят о широком круге интересов автора.

Статья оформлена компактно, грамотно, типичными примерами и сделанные несколько интересных предложений в данной сфере можно учесть в случае новых реформ.

Ключевые слова: добровольное медицинское страхование, гражданско-правовая ответственность, субъекты медицинского страхования, страхователь, страховщик, договорная ответственность.

THE RESPONSIBILITY OF SUBJECTS OF THE VOLUNTARY HEALTH INSURANCE

S.Avetisyan

SUMMARY

The author of the article studies the category of responsibility as applicable to the subjects of legal relations arising out of voluntary health insurance, proposes the methods aimed at strengthening of protection of interests of insured citizens in these relations.

The author owns more details of the discussed issue: holds interesting parallels in the existing laws of Armenia and Russia. Her references speak about a wide range of interests of the author.

The article is framed compactly, competently, with typical examples and some interesting suggestions can be taken into account in this field in the case of new reforms.

Keywords: voluntary health insurance, civil responsibility, subjects of health insurance, insurant, insurer, contractual liability.

ОБЫЧАИ И ОБЫКНОВЕНИЯ МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛИ КАК ИСТОЧНИКИ LEX MERCATORIA

С.Е. Арутюнян

АННОТАЦИЯ

Данная статья посвящена рассмотрению международного торгового обычая и обыкновения как одних из главных источников lex mercatoria. В работе проводится детальный анализ терминов, обозначающих торговый обычай, также осуществлен анализ условий, позволяющих отнести конкретное правило поведение к обычаю.

Ключевые слова: международный торговый обычай, обыкновение, lex mercatoria.

Современный оборот товаров охватывает такое многообразие различных торговых сделок, что ни одна национальная правовая система, включая международное частное право, не в состоянии предоставить механизмы регулирования всевозможных явлений, возникающих в международном торговом обороте. И в связи с тем, что этот международный торговый оборот развивается стремительно и как следствие происходит интернационализация хозяйственной жизни, возникают потребности регулирования правоотношений более гибкими инструментами такими, как торговый обычай, обыкновение.

Международный торговый обычай и обыкновения также являются источниками lex mercatoria. Как отмечается многими специалистами, торговый обычай является первым источником lex mercatoria, который возник вместе с самой торговлей и считается одним из главных источников lex mercatoria. Они являются своеобразными нормами lex mercatoria и возникают исключительно по воле делового сообщества и, как правило, не получают письменного закрепления [1].

В науке международного частного права категория «международные торговые обычаи» является одной из наиболее спорных и неоднозначных. До настоящего времени не удалось сформировать понятие «международного торгового обычая» [2].

Основная проблема, связанная с понятием «обычай» (custom, coutume), состоит в том, что и в доктрине, и на практике разных государств отсутствует единство при использовании терминов, обозначающих торговый обычай. Так, например, в отечественной и российской правовой доктринах наряду с термином «обычай» используется термин «обыкновение». Но не следует путать эти два понятия. Во-первых, обычаи применяются без прямого согласия и выбора сторон и даже без их ведома [3]. Обыкновения, однако, должны упоминаться и избираться сторонами, чтобы быть применимым к конкретному контракту, в данном случае происходит их инкорпорация в контракт. Как отмечает Дж. Робертс, обычай (custom) начинается там, где обыкновение (usage) заканчивается [4]. Дж. Старке полагает, что обыкновение является международной привычкой, которая еще не получила полного юридического утверждения. Обыкновения могут быть кон-

фликтующими между собой, обычай же должен быть единообразным и самодостаточным [5]. У обыкновений отсутствуют такие черты обычая как единообразие и повторяемость. Они не представляют собой формального источника права, но являются средством для составления и интерпретации контрактов [6].

Т.е. следует провести отличие обычая от обыкновения, которое складывается на практике торговых сделок и определяет их детали. Таким образом, самой главной отличительной особенностью обыкновения является отсутствие opinion juris, т.е. восприятия данного правила поведения как юридически обязательного. При этом, обыкновение часто носит менее общий, чем обычай, характер и является как бы техническим правилом, способствующим упорядочению отдельных моментов сделки [7].

Интересным является подхода Гуда, который не делает никакого различия между обычаями и обыкновениями: «Смысл современного подхода – относиться к двум терминам, как взаимозаменяемыми. В транснациональном коммерческом праве термин «обыкновение» или «обычай» является то, что общепринято; в международном праве речь идет, как правило, об обычаях» [8].

О.В. Малова, в свою очередь, различает эти понятия по такому признаку, как нормативно-правовой характер правового обычая, но при этом же уточняет: «Сравнительно-правовой анализ показывает, что четких противопоставляемых признаков обычая и обыкновения не выявлено, что дает основание причислять обыкновение к виду правовых обычаев» [9].

А во Франции термины «coutume» и «usage» для регулирования торговых отношений считаются взаимозаменяемыми. В общем праве (США, Англия) аналогичная ситуация, не делается принципиального различия между понятиями «custom» и «usage». В англо-американской теории и практике бывает довольно трудно четко разграничить обычай и обыкновение, так как их часто отождествляют.

В английской юридической литературе торговое обыкновение определяется, как правило, поведения, настолько известное в данной сфере деловой жизни, что оно считается составной частью заключенного контракта, если только стороны не исключили его в прямо выраженной или подразумеваемой форме. Торговые обыкновения в английском праве имеют важное значение при толковании, в частности, таких слов, как: погожие рабочие дни, отгрузка, текущие дни, оговорки «около» и т.п. [10].

В американском праве под торговым обыкновением (trade usage) понимается общепринятая практика, на которую полагаются стороны многочисленных сделок в определенной области торговли [11]. Так, Единообразный торговый кодекс США (The Uniform Commercial Code) дает определение торговому обыкновению в § 1–303 (c): «Торговое обыкновение – это любая практика или порядок деловых отношений/метод ведения торговли, соблюдение которых в тех или иных, местах, профессии или сфере деятельности носит настолько постоянный характер, что оправдывает ожидание их соблюдения также и в связи с данной сделкой» [12].

Как видим, нет единства в том, что понимать под обычным правом, где лежит граница между приведенными понятиями. Термины «custom», «coutume» чаще все же используются для обозначения обычно-правовой нормы, под термином «usage» понимаются большей частью правила ненормативного характера [13].

В целом, терминологические расхождения в этом вопросе связаны с различиями в методологическом подходе к юридическому содержанию понятия «обычай» в международных коммерческих отношениях. Так, по мнению авторов комментария к тексту Венской конвенции о договорах международной купли-продажи товаров, «в принципе, под термином «обычай» может пониматься не только правило, являющееся правовой нормой и применимое в качестве таковой (правовой обычай), но и правило, не являющееся правовой нормой, применимость которого базируется на том, что оно считается входящим в состав волеизъявления сторон по договору (обыкновение) [14]. Обычай как диспозитивная норма применяется, если иное не установлено соглашением сторон. Что же касается обычая (обыкновения), то он применяется, если в договоре содержится ссылка на него либо если договор позволяет предположить намерение сторон руководствоваться тем или иным обычаем (обыкновением). Другими словами, обычаи подразделяются на правила, являющиеся нормами права и не являющимися таковыми» [15].

Следует отметить, что на практике достаточно сложно провести явную грань между обычаем, являющимся нормой права, и обычаем, не являющимся таковым. В ряде случаев существование массы торговых обычаев, которые отступают от закона, провоцируют вопрос об обосновании юридической силы указанных обычаев, которые, в конечном итоге, заменяют закон. Как результат, в арбитражной и судебной практике, в законодательстве и иностранной юридической литературе принято толковать обычаи преимущественно как подразумеваемые условия договора (usage), которые инкорпорированы в сделку и выступают как волеизъявление сторон по сделке, без признания за обычаями силы норм права.

Говоря о необходимости четкого разграничения понятий «обычай» и «обыкновение», следует исходить из специфики юридической природы lex mercatoria. Дело в том, что, с точки зрения традиционного методологического подхода, базирующегося на постулатах юридического позитивизма, главным критерием определения юридической силы того или иного правила является воля государства. Иными словами, согласно позитивизму, признание обычая в качестве правовой нормы, целиком и полностью зависит от внутригосударственного права [16].

Право наделения определенной правовой нормы юридически обязательной силой в рамках lex mercatoria как правопорядка sui generis принадлежит не какому-либо внутригосударственному праву, а самим участникам международной торговли в качестве особого делового сообщества. Данное право исходит из особенностей lex mercatoria как автономного правопорядка (т.е. независимого от права какого-либо государства), создаваемого самими участниками международных торговых отношений для удовлетворения собственных нужд.

Также на основе анализа законодательства различных государств и юридической литературы можно выделить деление обычаев как источников регулирования международных торговых сделок на внутригосударственные обычаи, международные обычаи и международные торговые обычаи. При этом, внутригосударственные обычаи – это те, которые образовались и существуют в рамках юрисдикции одного государства [17]. В статье 1253 ГК РА говорится, что право, подлежащее применению к отношениям, осложненным иностранным элементом, определяется, в том числе, на основании международных обычаев, признаваемых в Республике Армения (такая же статья присутствует и в ст. 1186 ГК РФ). Речь в данном случае идет об обычаях, содержащих коллизионные нормы. Именно в этом качестве они выступают источником международного частного права в целом и источником регулирования внешнеэкономических сделок в частности [18]. Обычаи, которые упоминаются в статье 1253 ГК РА, следует отличать от обычаев, которые регулируют гражданско-правовые отношения по существу, т.е. содержат материально-правовое предписание. Для обозначения указанных обычаев в национальном законодательстве используется термин «обычаи делового оборота» (статья 7 ГК РА). Обычаи делового оборота, как правило, не содержат коллизионных норм и, таким образом, источником международного частного права не являются. Тем не менее, такие обычаи будут применяться к международному частноправовому отношению, если коллизионный вопрос будет решен в пользу армянского права [19].

Ценной является высказывание Д.Ф. Рамзайцева о том, что «относящиеся к международной торговле правила представляют собой, с юридической точки зрения, правила, действующие на определенной территории. Поэтому вопрос о применении в соответствующем случае того или иного конкретного обычая должен решаться на основе законодательства той страны, право которой подлежит применению к внешнеторговой сделке… так как содержание гражданских правоотношений сторон по сделке может определяться на основе законов определенной страны» [20]. Вследствие описанного, можно сделать вывод о том, что по своей юридической природе международные торговые обычаи являются разновидностью обычаев делового оборота [21].

Интересной также является высказывание Л.А. Лунца, который предлагал различать «в сфере международных обычаев торговли такие, которые действительно могут быть названы унифицированными международными нормами, и такие, которые применяются во внешней (международной) торговле, но вследствие своих национальных особенностей не могут быть названы нормами международного характера и являются по существу национальными обычаями» [22].

На наш взгляд, есть серьезные основания для демаркации на национальные торговые обычаи, которые применяются к международным торговым отношениям и международные торговые обычаи.

Одним из главных вопросов является также вопрос о нормативности международного торгового обычая, т.е. о юридической силе: является ли такой обы-

чай правовой нормой.

А профессор М.М. Богуславский считает, что в Российской Федерации торговые обычаи являются источником международного частного права, и это проявляется, в частности, в том, что, во-первых, «постоянный арбитражный орган – Международный коммерческий арбитражный суд при Торгово-промышленной палате РФ при разрешении споров учитывает торговые обычаи»; и, во-вторых, в Законе «О международном коммерческом арбитраже» 1993г. предусмотрено, что третейский суд разрешает споры на основе торговых обычаев (п. 3 ст. 28) [23]. Данное положение можно найти также и в РА, в частности, в части 4 статьи 28 закона РА о «Коммерческом арбитраже» указывается, что во всех случаях арбитражный трибунал выносит решение в соответствии с условиями договора, с учетом торговых обычаев, применимых к данной сделке.

Другие российские авторы, наоборот, утверждают, что «обычаи международного торгового или делового оборота» не имеют юридической силы и не могут быть источником международного частного права [24]. Вместе с тем, эти авторы отмечают, что обычаи международного делового оборота могут приобрести юридическую силу и стать источником права, если государства признают за ними это качество. По их мнению, это возможно в двух вариантах: «либо индивидуально государством и тогда международный торговый обычай становится санкционированным обычаем и в таком качестве – источником национального права; либо совместно с государствами в форме международного договора или в форме международно-правового обычая и в таком качестве он становится источником международного (публичного) права» [25].

